Կարծիք

Արման Ալեքսանդրի Ավետյանի ««Խելացի քաղաք» հայեցակարգը և XXI դարի քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության հիմնախնդիրները (Երևան քաղաքի նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից աշխարհի բնակչության մեծամասնությունը այսօր կենտրոնացված է քաղաքներում: Այդ քաղաքներից շատերը հանդիսանում են հսկայական էկոհամակարգեր՝ իրենց մեջ ներառելով մարդկային քաղաքակրթության գրեթե բոլոր առանձնահատկությունները (կենսագործունեության մեծ արագություն, ժամանակակից տեխնոլոգիաների լայն կիրառություն, շրջակա միջավայրի վիճակի վատթարացում և այլն):

Ժամանակակից քաղաքի և դրա տնտեսության արտաքին միջավայրի արագ փոփոխման պայմաններում գնալով մեծանում է ռազմավարական կառավարման արդի մեթոդների կիրառման կարևորությունը:

Արցախյան 44-օրյա պատերազմը և կորոնավիրուսային համավարակը ՀՀ-ում առաջ են բերել սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներ: Հաշվի առնելով Երևանի դերն ու տեղը ՀՀ տնտեսությունում՝ դրանք միայն բազմապատկեցին քաղաքային տնտեսության զարգացման ռազմավարության ներդրման ու իրականացման կարևորությունը:

Ժամանակակից քաղաքային տնտեսության հիմնախնդիրների լուծման ուղիներ է առաջարկում «Խելացի քաղաք» համակարգային հայեցակարգը, որը համայնքային տնտեսության կառավարման հիմքում դնում է ժամանակակից տեխնոլոգիաներն ու դրանց ձևավորած համակարգերը: Այս համատեքստում ավելանում է ժամանակակից և բարձր տեխնոլոգիաների դերը, որոնք թույլ են տալիս բարձրացնել իրականացվող աշխատանքների արդյունավետությունը և զարգացման ռազմավարության մշակման բյուրոկրատական գործընթացը վերածել ճկուն ու կայուն գործընթացի՝ հիմնված բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության վրա:

«Խելացի քաղաք»-ը վերափոխում է քաղաքի և դրա տնտեսության կառավարման փիլիսոփայությունը: Թվայնացման միջոցով այն ձևավորում է մի նոր էկոհամակարգ, որտեղ մարդիկ չեն ծախսում ավելորդ ռեսուրսներ հերթերում կանգնելու, խցանումների և այլնի վրա:

Ժամանակակից պայմաններում քաղաքի և դրա տնտեսության ռազմավարական կառավարման գործընթացում համակարգային հայեցակարգի մշակման և ներդրման անհրաժեշտությունն ու կարևորությունն էլ սահմանում են տվյալ հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել Երևանի քաղաքային տնտեսության կարևորագույն հիմնախնդիրները, մշակել և իրականացնել դրա զարգացման ժամանակակից ռազմավարությունը՝ հիմնված «Խելացի քաղաք» համակարգային հայեցակարգի վրա և հաշվի առնելով 21 -րդ դարի պահանջները: Այս նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել ու լուծվել են հետևյալ խնդիրները՝

- դիտարկել «Խելացի քաղաք» հայեցակարգը և բացահայտել դրա զարգացման ու իրականացման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել քաղաքների և դրանց տնտեսությունների ռազմավարական զարգացման գիտամեթոդական հիմունքները,
- որոշել քաղաքի ռազմավարական զարգացման սոցիալ-տնտեսական հիմքերը,
- ուսումնասիրել որոշ արտասահմանյան քաղաքների և դրանց տնտեսությունների ռազմավարական զարգացման առանձնահատկությունները «Խելացի քաղաք» հայեցակարգի կիրառման տեսանկյունից,
- սահմանել Երևանի քաղաքի և դրա տնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարային ուղղությունները,
- առաջարկել Երևան քաղաքի և դրա տնտեսության զարգացման ժամանակակից ռազմավարության մշակման և իրականացման գիտամեթոդական հիմունքները,
- օպտիմալացնել Երևանի քաղաքային տնտեսության որոշ կազմակերպությունների (հանրակրթական և առողջապահական կազմակերպությունների) բաշխումը,
- որոշել Երևան քաղաքում տեղափոխման և տրանսպորտային ենթակառուցվածքների օպտիմալ մոդելը,
- մշակել շրջակա միջավայրի պահպանության համակարգի կատարելագործման առաջարկություններ:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Առաջարկվել է Երևան քաղաքի հանրակրթական և առողջապահական օբյեկտների տեղակայման օպտիմալացման մաթեմատիկական մոդել, որը թույլ կտա հավասարաչափ բաշխել նշված հաստատությունները:
- Ներկայացվել է Երևան քաղաքի տրանսպորտային ենթակառուցվածքների համակարգային զարգացման մոդել, համաձայն որի՝ փոխվում է շարժման տարածական և ժամանակային փիլիսոփայությունը, և քաղաքի ստեղծվող նոր ենթակառուցվածքային ենթահամակարգերը թույլ կտան օպտիմալացնել մարդու տրամադրության տակ գտնվող ռեսուրսները (ժամանակ, ֆինանսներ և այլն), ինչպես նաև կրճատել վնասակար արտանետումների ծավալը:

- Մշակվել է Երևան քաղաքի կոշտ կենցաղային թափոնների հավաքման և տեղափոխման գործընթացի օպտիմալացման մոդել, որը թույլ կտա 1 տոննա աղբի հավաքման ու տեղափոխման ծախսերը հասցնել նվազագույնի:
- Առաջարկվել է Երևանի քաղաքապետարանի կազմակերպական կառուցվածքի կատարելագործման նոր մոտեցում, այն է՝ ստեղծել քաղաքի կառավարման ինտեգրված կենտրոն, որը՝ որպես թվային ուղեղային կենտրոն, հաշվի առնելով գործող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի պահանջները, լիարժեք տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և գնահատման հիման վրա կառաջարկի քաղաքային տնտեսության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտներում համապատասխան որոշումների ընդունման օպտիմալ տարբերակներ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը ու գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների գործնական արժեքավորությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Խելացի քաղաք» հայեցակարգի էությունը և քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության մեթոդաբանական հիմունքները ժամանակակից պայմաններում»*** գլխում ներկայացվում են «խելացի քաղաք» համակարգային հայեցակարգի էությունն ու առանձնահատկությունները, քաղաքային տնտեսության ռազմավարական կառավարման հիմքերն ու հիմնախնդիրները արդի պայմաններում և քննարկվում են հայեցակարգի ներդրման մեկ տասնյակից ավելի քաղաքների փորձի համեմատական վերլուծության արդյունքները:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Երևան քաղաքի քաղաքային տնտեսության վիճակի վերլուծությունը և դրա զարգացման հայեցակարգային հիմնախնդիրները»*** գլխում բացահայտվում է Երևանի քաղաքային տնտեսության տեղն ու դերը ՀՀ տնտեսությունում, առանձնացվում են ՀՀ-ում համայնքային տնտեսության կառավարման օրենսդրական և կազմակերպչական հիմնախնդիրները, առաջարկվում է քաղաքային տնտեսության թվային ծրագիրը «Խելացի քաղաք» հայեցակարգի հիման վրա:

Ատենախոսության երրորդ՝ ***«Երևանի քաղաքային տնտեսության կառավարման կատարելագործման հիմնական ռազմավարական ուղղությունները ժամանակակից պայմաններում»*** գլխում առաջարկվում է հանրակրթական և առողջապահական օբյեկտների տեղաբաշխման օպտիմալացման մոդելը, ներկայացվում է Երևան քաղաքի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման փիլիսոփայության օպտիմալ մոդելը, հիմնավորվում են Երևան քաղաքում շրջակա միջավայրի պահպանության համակարգի կատարելագործման հարցերը և առաջարկվում է դրանց հաղթահարման ուղիները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Հեղինակի կողմից Աշխատանքում ներկայացված որոշ մտքեր պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես.
   - ✓ Մեջբերում. «*Однако, как уже было отмечено, для повышения городской мобильности необходимо повысить* ***доступность школ***.»: Անհասկանալի է ինչ նկատի ունի հեղինակը *դպրոցների հասանելիություն* ասելով և, եթե հասանելիության տակ հասկանանք դրանց ֆիզիկական առկայությունը և ծնողների վրա ֆինանսական բեռը, ապա ինչու է հեղինակը որոշել որ նշված բաղադրիչների մասով Երևանում առկա է որևէ խնդիր (էջ 64),
   - ✓ ներկայացնելով Երևան քաղաքի տրանսպորտային ցանցի ծանրաբեռնվածությունը հեղինակը նշում է. մեջբերում. «*Между переменными есть отрицательная корреляционная связь (-0.9)…*»: Աշխատանքում որևէ կորելացիոն հաշվարկ արված չէ, ներկայացված կորելացիոն կապին որևէ հղում տրված չէ, հետևաբար պարզ չէ թե որտեղից ստացվեց այդ ցուցանիշը (էջ 66),
   - ✓ աշխատանքի նույն հատվածում (էջ 66), հեղինակը ներկայացնելով ավտոճանապարհային վթարներից մահացության դեպքերի վերլուծությունը, հանգում է այն մտքին, որ վթարներից մահացությունների աճը պայմանավորված է ավտոմեքենաների քանակի աճով, թեև մաթեմատիկական հաշվարկով վերոնշյալ պնդումը տրամաբանական է, այնուամենայնիվ մեր կարծիքով վթարներից մահացության աճը հիմնականում պայմանավորված է վարորդների մոտ երթևեկության կանոնների չպահպանմամբ,
   - ✓ Ատենախոսության 2.2 ենթագլխում, հեղինակը ներկայացնում է Երևան քաղաքի խնդիրներն ըստ ոլորտների, որտեղ անդրադառնալով Առևտրի և ծառայությունների ոլորտին քաղաքապետարանին առաջարկում է. մեջբերում. «*создать благоприятные условия онлайн-торговли и удаленного обслуживания населения и т. д.*»: Հարց է առաջանում, արդյո՞ք քաղաքապետարանի գործառույթների կամ լիազորությունների մեջ մտնում է նման միջոցառումների իրականացումը (էջ 85):
2. Ատենախոսության 2.2 ենթագլխում, հեղինակը վերլուծելով Երևան քաղաքի 2019-2023թթ զարգացման ծրագրիրը, ներկայացնում է առաջարկություններ, որոնք թեև ըստ էության կլուծեն աշխատանքում դիտարկվող խնդիրները, այնուամենայնիվ դրանք շարադրված են ցանկությունների տեսքով, հիմնավորված և դիտարկված չէ դրանց իրականացման մեխանիզմները, հաշվի առնված չէ Երևանի քաղաքապետարանի ֆինանսական հնարավորությունները:

3. Աշխատանքի 3.1 ենթագլխում հեղինակը վերլուծելով Երևանում նախադպրոցական հաստատությունների հավասարաչափ բաշխվածության խնդիրը ի լրումն առաջարկում է, բոլոր այն դեպքերում, երբ նոր օբյեկտի կառուցումը կամ եղածի

հզորության ավելացումը տնտեսապես նպատակահարմար չէ ապա քաղաքապետարանը պետք է սուբսիդավորի նախադպրոցական կրթությունը մասնավոր կազմակերպություններում: Մասնավորապես ըստ հեղինակի ներկայումս նախադպրոցական կրթություն ցանկացող բայց ինչ-ինչ պատճառներով չստացած երեխաների թիվը կազմում է 8400, իսկ առաջարկվող փոխհատուցումը՝ ամսական 58000 դրամ մեկ երեխայի հաշվով: Հարց – Ի՞նչ միջոցների հաշվին քաղաքապետարանը կարող է իրեն թույլ տալ սուբսիդավորել ամսական մոտ 487 մլն. դրամի հասնող գումարը (տարեկան մոտ 5.8 մլրդ դրամ) (էջ 103):

4. Աշխատանքի 3.2 ենթագլխում, հեղինակը մանրամասն վերլուծելով Երևանի տրանսպորտային ցանցը, այնտեղ առաջացող խնդիրները մեկնաբանել և պայմանավորել է բացառապես տարբեր տիպի ավտոմեքենաների քանակով (հիմնականում անձնական օգտագործման և մեծ բեռնատար): Ընդհանուր առմամբ համաձայնվելով հեղինակի հետ, այդուհանդերձ կարծում ենք, որ ցանկացած խնդրի արդյունավետ և հիմնովին լուծում տալու համար, այն ոչ թե պետք է ֆիքսել եղած վիճակի համատեքստում, այլ հասկանալ դրա առաջացման պատճառը: Մասնավորապես, ինչպես Կենտրոն, այնպես էլ Արաբկիր վարչական շրջաններում տրանսպորտային ցանցի գերծանրաբեռնվածությունը մշտական կայուն վիճակ չէ, այն սուր է արտահայտվում օրվա կոնկրետ ժամերին՝ պայմանավորված աշխատանքային ժամի սկզբով, ավարտով, դպրոցներում և ԲՈՒՀ-երում դասերի սկզբով և ավարտով և ընդհանուր առմամբ կարելի է բաժանել մի քանի ժամանակահատվածների՝ առավոտյան 8:15-ից մինչև 10:00, կեսօրին՝ 13:00 – 15:00, երեկոյան՝ 17:30 – 19:30: Հետևաբար կարծում եմ որ մասնավորապես Կենտրոն վարչական շրջանում տրանսպորտային ցանցի լիցքաթափման հարցը կլուծվի եթե օպտիմալացվեն կամ վերաբաշխվեն այնտեղ գտնվող պետական բազմաթիվ հաստատությունները, ԲՈՒՀ-երը, սահմանափակում դրվի ոչ տեղաբնակներին տվյալ տարածքի դպրոցներից օգտվելու վրա և այլն:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ ատենախոսությունն իրենից ներկայացնում է ամբողջական հետազոտական աշխատանք, վերը նշված դիտողությունները բնավ չեն նսեմացնում ներկայացված աշխատանքի արժեքը և կարող են հաշվի առնվել հեղինակի կողմից հետագա ուսումնասիրությունների ժամանակ: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի թվով ութ գիտական հրապարակումներում:

Արման Ալեքսանդրի Ավետյանի՝ ««Խելացի քաղաք» հայեցակարգը և XXI դարի քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության հիմնախնդիրները (Երևան քաղաքի նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Տ.Ս. Մարտիրոսյան**

Տ. Մարտիրոսյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն. Դարբինյան**

02 դեկտեմբեր 2021թ